2002, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (118)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում նշվեց ՀՀ զինված ուժերի հիմնադրման 10-ամյակը

Կիրակի՝ հունվարի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց ՀՀ զինված ուժերի հիմնադրման 10-ամյակը: Դեռ վաղ առավոտյան մայր տաճարում հավատացյալների հոծ բազմության մեջ առանձնանում էր մի խումբ, որ զատվում էր համազգեստով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին սուրբ պատարագի էր եկել Հայոց բանակի բարձրագույն սպայական ողջ անձնակազմը՝ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի գլխավորությամբ:

Պատարագի ընթացքում հանդիսավոր կերպով ընթերցվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ Հայոց բանակի հոբելյանի առիթով: Ապա կատարվեց Հանրապետական մաղթանք: Սրբազան արարողության ավարտին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ զոհված ազատամարտիկների համար:

Հավարտ սբ. պատարագի՝ վեհարանի դահլիճում Ամենայն Հայոց հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն:

Հանդիսության ընթացքում ընթերցվեց Վեհափառ հայրապետի երկրորդ կոնդակը, որով Հայ Առաքելական եկեղեցու «Սբ. Ներսես Շնորհալի» շքանշանով, ծննդյան 75-ամյակի առթիվ, պարգեւատրվեց ՀՀ նախագահի զինվորական գծով խորհրդական եւ զինված ուժերի ռազմական տեսուչ գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը՝ իր քաջակորով առաջնորդությամբ հաղթանակով պսակված կարեւոր ու վճռական շատ մարտերի, հատկապես Շուշիի հերոսամարտի, ինչպես նաեւ հայրենիքին մատուցած այլ ծառայությունների համար:



Հայոց բանակի հոբելյանի առիթով շնորհավորելով զորահրամանատարներին՝ Վեհափառ հայրապետն ասաց. «Թող Աստված ամուր, զորեղ եւ հաղթական պահի ձեր աջը, աննկուն՝ ձեր կամքը, միշտ արի ու հաղթական՝ ձեր հոգին, որպեսզի երբեք չխաթարվի անդորրը մեր կյանքի այս փոքրիկ աշխարհում, որի մեծության տեսիլքը միշտ կրում ենք մեր հոգում, որը մեզ ոգեշնչում է, որը մեզ գոտեպնդում է, որը մեզ մղում է նոր սխրանքների»:

Իր հերթին՝ պաշտպանության նախարարն Ամենայն Հայոց կաթողիկոսին պարգեւատրեց ՀՀ պաշտպանության նախարարության «Զինանշան» հուշամեդալով:

«Վստահ եղեք, որ այսօրվա փառահեղ պատարագը շատ երկար ժամանակ մեզ կոգեւորի, այս փառահեղ պատարագը երկար ժամանակ մեզ կստիպի աշխատել շատ ավելի լավ, քան մենք այդ անում էինք: Փառք Աստծո, այսօր մենք ունենք պետություն, փառք Աստծո, այսօր մենք ունենք բանակ, փառք Աստծո, այսօր մենք կարող ենք ճակատներս բաց նայել մեր քույրերին, մեր կանանց, մեր երեխաներին», - ասաց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը:

### Գարեգին Բ կաթողիկոսն օրհնեց ՀՀ զինված ուժերի մարտական դրոշը եւ այցելեց Եռաբլուր

Հունվարի 28-ին՝ ՀՀ զինված ուժերի հիմնադրման օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ մասնակից լինելու նախարարությանը ՀՀ զինված ուժերի մարտական դրոշի հանձնման արարողությանը:

ՀՀ նախագահի հրամանագրով՝ ՀՀ զինված ուժերի մարտական դրոշը՝ իբրեւ խորհրդանիշ Հայոց բանակի փառքի ու հաղթանակի, նախարարությանը հանձնվեց զինված ուժերի առաջին հոբելյանի՝ 10-ամյակի առիթով: Հանդիսավոր պայմաններում դրոշը հանձնվեց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին:

Արարողության ընթացքում Վեհափառ հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված զինված ուժերի համար եւ օրհնեց մարտական դրոշը:

Հանդիսության ավարտից հետո Վեհափառ հայրապետն ու ՀՀ նախագահն իրենց շքախմբերով ուղղվեցին դեպի Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու զոհված ազատամարտիկների հիշատակին եւ ծաղիկներ դնելու նրանց գերեզմաններին: Եռաբլուր էին ժամանել նաեւ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, ՀՀ եւ ԼՂՀ բարձրաստիճան պետական այրեր, զինվորականներ: Այցելուները կանգ առան անհայտ զինվորի եւ ՀՀ պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանի գերեզմանների առջեւ, ուր Վեհափառ հայրապետն աղոթք բարձրացրեց հայրենյաց պաշտպանության համար ընկած մարտիկների հոգիների խաղաղության համար:



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

*Հայրապետական կոնդակը՝ ընթերցված Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում հունվարի 27-ին՝ ընթացքում սբ. պատարագի*

*Հայոց Ազգային Բանակի կազմաւորման տասներորդ փառապանծ տարեդարձի առիթով Միածնաէջ Մայր Աթոռից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքներն ենք բերում սիրեցեալ մեր ժողովրդի աշխարհասփիւռ բոլոր զաւակներին, մեր բանակի քաջարի զօրահրամանատարներին ու զինուորներին:*

*Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհաբանական Մեր աղօթքն ենք առ Աստուած բարձրացնում, որ մեր ժողովուրդը Հայաստանի անկախութեան առաջին տարիներին խաղաղ ու պայծառ գալիքի հաւատով, Հայրենիք եւ Սփիւռք միասնական ջանքերով ամուր հիմքերը դրեց Ազգային Բանակի:*

*Արցախի ազատագրութեան ու Հայաստանի սահմանների պաշտպանութեան մարտերում ծնունդ առաւ Հայոց Բանակը: Ազատամարտիկների բոցավառ սրտերի վեհ սիրով ու աննկուն կամքով օրաւուր զօրացաւ, ուժ առաւ Հայկեան ազատատենչ ոգուց, Վարդանանց հաւատաւոր հոգուց, աննահանջ ու յաղթական դարձաւ սրբանուէր կեանքով հայ քաջորդեաց, ովքեր վասն հայրենեաց նոր պատերազմում համալրեցին անմահների զօրագունդը, «Որ հայրենեաց շողայ արեւ..., Որ հայրենեաց վարդեր բացուին...» եւ հաւատով, յոյսով, սիրով միաբան՝ միշտ կեցցէ Մայր Հայաստան:*

*Արդարեւ, Հայոց Ազգային Բանակի տասնամեայ ուղին՝ լեցուն փառաւոր յաղթանակներով, նոր պանծալի էջեր է յաւելում հերոսական մեր պատմութեանը:*

*Փառք Տիրոջը, որ Արցախում եւ Հայաստանում հայրենաբնակ մեր ժողովուրդը ազատ եւ խաղաղ երկնքի ներքոյ իր նոր կեանքն է կերտում, որ այսօր առ Աստուած խնկաբոյր աղօթք է բարձրանում Գանձասարի հինաւուրց վանքի եւ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Եկեղեցու նորոգուած խորաններից, Հայոց Արեւելեան բարձրիկ աշխարհի նուիրական սրբավայրերից:*

*Փառք Տիրոջը, որ հայ զօրահրամանատարի տաղանդը, հայ զինուորի քաջութիւնն ու հաւատարմութիւնը այսօր ծառայում են մեր անկախ Հայրենիքին:*

*Այս տօնական օրը Մենք աղօթք ենք բարձրացնում բոլոր այն հայորդեաց հոգիների համար, ովքեր իրենց կեանքը զոհաբերեցին յանուն այս խաղաղ առաւօտի՝ դառնալով նոր «զօրականք յաղթողք պսակեալ ի Քրիստոս»: Երիցս փառք նրանց անմահ յիշատակին եւ աստուածային օրհնութիւն նրանց լոյս հոգիներին:*

*Հայրապետական Մեր աղօթքն ու հայցն է, որ Տէրը Իր օրհնութեան մէջ խաղաղ պահի աշխարհը համայն, Ազատն Մասեաց հայեացքի ներքոյ պահպանի Հայոց Աստուածպարգեւ Հայրենիքը եւ միասնական պահի աշխարհասփիւռ մեր ժողովրդին ու հաւատարիմ՝ Աստուածկառոյց Սուրբ Էջմիածնի համազգային Ուխտին:*

*Թող Բարձրեալի Ամենակարող Աջը այսօր եւ միշտ զօրացնի ու պահպանի հայրենեաց պաշտպան Մեր սիրեցեալ որդիներին՝ զօրաց եւ զօրականաց հայոց:*

*Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:*

*Օրհնութեամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տուաւ Կոնդակս ի 25-ն Յունուարի յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի ընդ համարաւ 78*




*Ներկայացվող «Աֆորիզմներ» գրքի ավելի սեղմ տարբերակը՝ «Թեւավոր մտքեր» վերնագրով, առաջին անգամ լույս տեսավ 2001 թվի հունվարին Լոս Անջելեսում՝ մեկենասությամբ ազգային բարերար եւ հայ գրականության նվիրյալ Հարություն Սիմոնյանի...*

*Ներկա հատորը լոսանջելեսյանի համեմատ կրկնակի ծավալ ունի: Սա հայրենիքում Իսահակյանի աֆորիզմների հրատարակման առաջին փորձն է: Խորապես գիտակցելով, որ գրքի խորհուրդը առաջին հերթին ուղղված է նոր սերնդի հայ ընթերցողին, մենք ծրագրեցինք գիրքը տպագրել մի ԲՈՒՀ-ի միջոցով, որը եւ ինքն է երիտասարդ, եւ անմիջականորեն իր էությամբ կապված է մեր երիտասարդության հետ: Դա Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանն է, որի ռեկտորը՝ վաստակաշատ մանկավարժ եւ նվիրյալ իսահակյանագետ պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը, ոչ միայն հովանավորեց գրքի հրատարակումը, այլեւ գրեց նրա առաջաբանը:*

*Մենք հրապարակ ենք հանում Իսահակյանի նոր գիրքը 21-րդ դարի նախաշեմին եւ թեւակոխում ենք նոր հազարամյակը՝ առաջնորդվելով բանաստեղծի խոսքով. «Աշխարհն եկավ Հայաստան եւ պիտի մնա Հայաստան»:*

*Ավիկ ԻՍԱՀԱԿՅԱՆ*

# ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
# ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

***Վերջերս «Հրաչյա Աճառյան» համալսարանը ընթերցողների սեղանին դրեց 20-րդ դարի մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի աֆորիզմների մի ստվարածավալ ժողովածու՝ համեմված Մ. Սարյանի ստեղծագործությունների գունավոր վերատպություններով: Երկու վարպետներ եւ երկու աշխարհ՝ մեկ շքեղ հրատարակությամբ:***

**Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում Իսահակյանի՝ Հայ Առաքելական եկեղեցուն առնչվող որոշ աֆորիզմներ՝ վերոհիշյալ ժողովածուից:**

## ՄԵՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱԶԳ ԵՆՔ

...Մեր հավաքական կյանքը եկեղեցիով(վարպետի խոսքը վերաբերում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն) պիտի գլխավորվի, երբ պետությունների մեջ մենք եկեղեցու միությամբ ազգ ենք դարձած, եկեղեցիով մենք հավաքական միություն ենք: Մեր նշանաբանները՝ եկեղեցի, դպրոց, ընտանիք: Դպրոցը եկեղեցու նախագավիթն է: Այդ երրորդությամբ մենք ապրել ենք մինչեւ այսօր եւ տակավին երկար կապրենք...

Մենք առել ենք Քրիստոսի խաչը մեր ուսին ու մինչեւ այսօր տանում ենք այդ խաչը: Իսկ մյուս ազգերը վաղուց է, որ այդ խաչը ոտքի տակ են տվել:

...Ինչո՞ւ է հայ ժողովուրդը Աստվածաշնչի Հոբին եղովմական հողերից տեղափոխել իր հողերի վրա: Անշուշտ, խորունկ նույնություն է տեսել Հոբի եւ իր ճակատագրի միջեւ:...Հայ ժողովուրդն էլ, Հոբի պես, հավատում է իր պայծառ ապագային, որ վերստին պիտի ստանա իր արդարավաստակ գույքն ու ինչքը, վերստին պիտի ունենա բազմաբույր որդիներ եւ աղջիկներ, ավելի կորովի եւ ավելի գեղեցիկ, քան առաջինները:

Այլապես, առանց այս հզորագույն հավատի, ինչպե՞ս կարող էր նա, ցավերով ու խոցերով լի, ապրել դարեր եւ դարեր, նստած հայրենիքի մոխիրների վրա, իր շքեղ ավերակների մեջ...

Մեր սրբազան մագաղաթների պահպանման համար ինչքա՜ն կյանքեր են զոհվել, նահատակություններ կատարվել:

Պահել են անձավների մեջ, պահել են փաթաթած մետաքսների եւ զառերի մեջ աչքի լույսի պես, տարել են իրենց հետ գաղթավայրեր: Նրանցից հայրենիքի բույրն են առել, հայրենիքի կարոտը, պաշտել են, երկրպագել, աղոթել նրանց վրա, հիվանդներ բուժել, նվիրական ավանդներ փոխանցել սերնդեսերունդ:

Մի ազգի ոճը, երգը, արվեստը, նրա կրոնը, հավատալիքները, սովորույթները, ավանդությունները, պատմությունը, լեզուն, խոսքը, բոլորը միասին մի երկիր, նրա հողն ու ջուրը ոճավորում են, իմաստավորում, բանական դարձնում, ոսկի մշուշով, ոսկեզօծ շղարշով պատում, ադամանդյա փոշիներով ցոլացնում, դարձնում այդ երկիրը հայրենիք, նվիրական, սիրելի, ըղձալի, նրա համար մեռնելը՝ քաղցր՝ վեհ, անմահություն:

...Քրիստոնեությունը բոլոր ազգերի համար ոչինչ բան է, բայց մեզ համար նա ամեն ինչ է, որովհետեւ մենք ենք, որ մենավոր առաքյալի պես մխրճված ենք իսլամի մեջ՝ երբեմն խաչի վրա, երբեմն խաչի տակ, բայց երբեք՝ դասալիք, խաչադրուժ. մենք, կանգուն պահելով ավետարանի եկեղեցին, պայքարելով, նահատակվելով, նորից հարություն առնելով եւ նորից հաղթանակով պայքարելով: Եվ այդպիսի թանկ գնով պահված եկեղեցին, քրիստոնեությունը անգնահատելի է մեզ համար, անլքելի, անդավելի, անուրանալի......Աննման է մեր Նարեկը, շարականները, միջնադարյան երգերը (Վ. Բրյուսով), Քուչակ, Նաղաշ, Թլկուրանցի եւ այլն... Եվ հենց այդ դարերում է, որ ստեղծագործվեց հայկական ճարտարապետական ստիլը, մարմին առնելով մեր վանքերի մեջ. այդ ստիլը անցավ Եվրոպա եւ հիմք դարձավ բյուզանդականին, ապա ռոմանականին (էքս լա Շապելը) Աախեն, Շառլմանի մայրաքաղաքները, Ֆրանսիայում, Իտալիայում:



Հայ ժողովրդի համար Էջմիածինը՝ եկեղեցիների մայրը, հայրապետական աթոռը, այս ծանր ու տանջալից դարերի ընթացքում միակ ազգային հաստատությունն է, որ տակավին հարատեւում է մնալ հայության ձեռքում: Նա ազգային գոյության խարիսխն է, ազգային միության սիմվոլը:

Հայի մաշկը որ քերես, տակը Էջմիածին դուրս կգա:

## ԱՆԻ ՄՏՆՈՂԸ



Երբ մարդ Անի է մտնում, կարծես մի ուրիշ աշխարհ է ընկնում, մի կախարդական աշխարհ, բայց շա՜տ հարազատ, շա՜տ դարեր, հազար տարիներով ծանոթ, մտերիմ, հարազատ, սրտակից: Մի քաղցր, տխուր զգացում համակում է քեզ - հայրենի հին տան զգայությունը. այստեղ են ապրել քո բոլոր հայրերն ու մայրերը, ու քեզ նրանք՝ բոլորը, սիրել են այստեղ:

Այդ շենքերը, պարիսպները, փողոցները, բուրգերը, եկեղեցիները, տները հոգով խոսում են քեզ ու հիշեցնում են քեզ, որ դու խաղացել ես սրանց շվաքների մեջ, երազել ես սրանց պատերի եւ կամարների տակ, այդ տեղերը մայրիկիդ ձեռքը բռնած շրջել ես... Եվ մի վեհ զգացում, մի սուրբ հուզում, գորով՝ խոնարհեցնում է գլուխդ, ծնկներդ հեշտությամբ իջնում են, եւ կարոտով եւ երկյուղածությամբ համբուրում ես այս քարերն ու փոշիները: Եվ չես ուզում հեռանալ: Ինչպե՞ս հեռանաս քո հին հազարամյա տնից եւ գնաս նորից օտարություն, ուրիշ տների, պանդոկների մեջ - օտար, պանդուխտ, վտարանդի պես:

Այնքան նվիրական են այս պատերը, այնքա՜ն սրտախոս, կաթոգին...

Դու այստեղ դու ես եւ, վերջապես, այստեղ դու դարձել ես դեպի քեզ, ինքդ քեզ ես եկել...

Մայր եկեղեցին, շինված անվախ, հանդուգն կառուցում, սլացիկ սյուներ, թռչող կամարներ՝ երկնային:

Թռիչքներ... քարացած երգ ու կչիռ:

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԽԱՐՈՒՅԿ

*Սկիզբը՝ էջ 4*

Թեպետեւ Հայոց եկեղեցին աստվածաբանական իր մեկնաբանություններն է կապել Տյառնընդառաջի նախօրեին վառվող կրակի կապակցությամբ, այնուհանդերձ ժողովրդական շրջանակներում մոռացության չմատնվեցին սնոտիապաշտական սովորույթները (խարույկի վրայից թռչել, շուրջը պտտվել, ծխից գուշակություններ անել, վառված փայտերով շրջել եւ այլն):

Ահավասիկ ժողովրդական ունայն ավանդույթների անընդունելի լինելն է ակնարկում Սիմեոն Ա Երեւանցի Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ իր բարեկարգած «Տոնացույց»-ի մեջ նշելով. «Հրով շրջելը խոտելի է, որը տգետների կողմից է ներմուծված»:

Այո՛, անվերապահորեն մերժելի են բոլոր սնոտիապաշտական սովորույթները, քանի որ դրանք մոլորության մեջ են գցում մարդկանց եւ հեռացնում են ճշմարիտ հավատքից: Եկեղեցական սուրբ հայրերը՝ մերժելով մերժել են այն ամենը, ինչը հավատացյալների հոգիներում թերահավատության կամ երկբայության սերմեր է ցանում: Հետեւաբար նրանք ոչ միայն սոսկ քարոզներով ու խրատներով են պայքարել, այլեւ կանոնական որոշումներ են հաստատել, ըստ որոնց՝ նզովքի պատժով արգելվել է անհավատների կամ հեթանոսական սովորույթների կիրառումը. «Եթե մեկը հեթանոսների սովորությունները ընդունի՝....[Քրիստոսին] խաչողների շարքում թող դասվի» (ս. Բարսեղ Կեսարացի):

Ցանկալի է, որ Տյառնընդառաջի նախօրեի խարույկը վառվի միայն ու միայն եկեղեցիների բակերում՝ հոգեւորականների հսկողության ներքո՝ անհրաժեշտ մեկնաբանություններով եւ հրի հոգեւոր խորհուրդները ներկայացնող երգերի (մեղեդիներ, տաղեր, շարականներ) կատարումներով:

Կրակի բորբոքման հե՛նց այս կերպով է, որ մենք, իրապես, Տիրոջ սիրո հուրն ենք խնդրում:

*Արթուր ԴՊԻՐ*

# ՀԱՎԱՏ

**Քրիստոնեական երեք գլխավոր առաքինություններն են հավատը, հույսը եւ սերը:**

**Հավատն առ Աստված միաժամանակ սեր է ամենաստեղծ Արարչի հանդեպ: Արարչին սիրել, առանց ապավինելու Նրան ու առանց Նրանից հուսալու հավատ, հույս, սեր եւ այլ շնորհներ, նշանակում է կորցնել ողջախոհությունը, ընկնել մոլորության գիրկը: Մինչդեռ Տերն Իր հավատարիմ զավակներին ասում է. «Դու իմ ծառան ես, քեզ ընտրեցի ես եւ չեմ լքի քեզ,- դու մի՛ վախեցիր, քանզի ես քեզ հետ եմ, մի՛ խաբվիր, քանզի ես եմ քո Աստվածը» (Եսայի 41/10):**

Հավատ, հույս, սեր: Անշուշտ, անբաժանելի են այս երեք շնորհները: Հավատն աստվածային շնորհ է, եւ ինչպես Հիսուս Քրիստոսն է ասել. «Մարդը չի կարող ինձ մոտ գալ, եթե Հայրս նրան չձգի»: Հայր Աստվածն է լուսավորում մարդու միտքը՝ հավատ շնորհելով եւ կատարելությանը մոտենալու ճանապարհը մատնացույց անելով: Ցավոք, հաճախ մարդն իր ազատ կամքով հեռանում է Աստծուց ու խարխափում խավարի մեջ: Ահա թե ինչու Պողոս առաքյալը բացատրում է, որ հավատը ծնունդ է առնում Աստծու շնորհից, Նրա խոսքից, Նրա գործերից ու նաեւ մարդու սրտից: Հավատը տրված է ամենքին, բայց ընդունում են սրտով մաքուրները: Իսկ ովքեր հավատ ունեն իրենց սրտում, նրանց համար այլեւս անհնարին ոչինչ չկա, քանի որ հավատից անպակաս է Աստծու օրհնությունը:

Շատերը մկրտության սուրբ խորհրդով որդեգրվել են Աստծուն եւ հիշում են, որ մկրտության սուրբ ավազանի մոտ, կնքահոր միջոցով, իրենց համար Աստծուց խնդրվել է ամենից առաջ հավատ, նաեւ հույս ու սեր:

Ի՞նչ է քրիստոնեական հավատը, ինչի՞ն պետք է հավատա քրիստոնյան:

Քրիստոնեական հավատն ամենից առաջ Աստծու գոյության գիտակցությունն է, Աստծուն ճանաչելը, Նրան կատարելապես վստահելը: Քրիստոնյան հավատում է, որ Աստված մեկն է, ուրիշ աստվածներ չկան. Աստված հոգի է, անտեսանելի է եւ ամենուրեք է: Քրիստոնյան հավատում է Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, եւ Սուրբ Հոգուն: Իհարկե, սա չի նշանակում, թե Նրանք երեք աստվածներ են: Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին մեկ էություն են, մեկ գոյություն, մեկ Աստծու երեք դրսեւորումները:

Քրիստոնյան հավատում է Աստծու խոսքին: Քրիստոնեական հավատը Աստծու պատգամների ընդունումն է եւ դրանցով ապրելը: Պողոս առաքյալի խոսքերով՝ «հավատը հուսացած բաների հաստատումն է եւ ապացույցն այն բաների, որոնք չեն երեւում» (Եբր. 11/1): Հուսացած բաներն Աստծու խոստումներն են՝ ապաշխարությամբ մեղքերի թողություն ստանալու, հարության, հավիտենական կյանքի մասին:

Իսկ ահա, թե ինչ է գրում մեկ ուրիշ առաքյալ. «Գործերով է արդարանում մարդ եւ ոչ թե միայն հավատով... Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակ. 2/24-26): Այսինքն՝ հավատն արտահայտելու միջոցը գործերն են: Անշուշտ, մարդու գործեր անելով, նկատի է առնվում գլխավորապես Աստծու պատվիրանների կատարումը:

Ահա Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքը հավատի մասին. «... Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ, եւ կտեղափոխվի. եւ որեւէ բան ձեզ համար անհնարին չի լինի» (Մատթ. 17/19):


«Հիսուսի մկրտությունը» Տաթեւիկ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ (13 տ.)

## ՀՅՈՒՐԱՍՐԱՀ «ԲՈՂԲՈՋՆԵՐ»

**Լրացավ հայոց բանակի կազմավորման 10-ամյակը**

### ԶԻՆՎՈՐ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Զինվորն է քայլում հայոց մեծ ազգի,
Սերվել է նա քաջ Վարդանանց տոհմից.
Ավարայր տեսած զինվորը հայոց
Այսօր հայրենյաց սահմանն է հսկում:

Դե, քայլի՛ր առաջ, զինվո՛ր հայրենյաց,
Մեր սահմաններին եղի՛ր պահապան,
Հողը, ներծծված ֆիդայու արյամբ,
Թող լինի հավերժ սիրո մեծ ասյան:

Ու քայլում է նա. դուք նայե՛ք, հայե՛ր,
Հայրենյաց հողի պատիվը պահող,
Անկախությունը փառքով նվաճած
Հայոց սուրբ ազգի զինվորին նայե՛ք:

*Վերոնիկա ՄԿՐՏՉՅԱՆ (15 տ.)*
*Երեւանի թիվ 27 միջն. դպրոց*

### ԶԻՆՎՈՐ

Հայրենիքի պաշտպանն ես դու,
Հայոց արծի՛վ զինվոր,
Մեր սահմաններն ես միշտ հսկում՝
Արթուն գիշեր ու զօր:

Դու մեր հայրն ես, եղբայրը մեր,
Ուսուցիչ ես, երգիչ,
Երբ խաղաղ է աշխարհը մեր,
Երկինքը՝ պարզ ու ջինջ:

Բայց թշնամին եթե մի օր
Մեր սահմանը խախտի,
Դու կդառնաս նորից զինվոր,
Նորից կելնես մարտի...

Չի մոռացվի սխրանքը քո,
Զինվո՛ր մեր քաջարի,
Դու քո կյանքով, արյունով քո
Մեզ խաղաղ կյանք բերիր...

*Սիրանուշ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ (14 տ.)*
*Երեւանի թիվ 69 միջն. դպրոց*

## ՄԻ՛ ԿԱՐԾԻՐ, ԹԵ ԱՄԵՆԱԳԵՏ ԵՍ

*Եթե դու դառնաս*
*Հայտնի ֆիզիկոս կամ այլ գիտնական,*
*Չպետք է կարծես,*
*Թե այլեւս չունես սովորելու բան.*
*Եվ երբ մտածես,*
*Թե կարող ես բոլոր հարցերին գտնել*
*պատասխան,*
*Ուրեմն, իմացի՛ր՝*
*Աշխարհի վրա կործանված մարդ ես,*
*Ո՛վ մարդ արարած.*
*Ուրեմն, մի՛ կարծիր, թե ամենագետ ես,*
*Քանզի դու մեծից եւ անգամ փոքրից*
*Սովորելու շա՜տ բաներ ունես,*
*Ինչ էլ որ դառնաս, որտեղ էլ լինես:*

*Իվետա ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ (15 տ.)*
*Բ. Վաղարշապատ*

## ՀՈԳՈՒ ԼՈՒՅՍԸ ՉԻ ՀԱՆԳՉՈՒՄ

Գիտեմ, որ եղել եք եկեղեցում եւ մոմ եք վառել, բայց չգիտեմ՝ նկատե՞լ եք, որ կան մոմեր, որոնք դեռ չվառված՝ արդեն մարել են, եւ մարելու պատճառը քամին է կամ... Կան նաեւ այնպիսիները, որ վառվում են, բայց՝ խոնարհված, այնպիսիներն էլ կան, որոնք վառվում են՝ մինչեւ վերջ կանգնած:

Այն մոմը, որը դեռ չվառված՝ արդեն մարել է քամու պատճառով, այն մարդն է, որին շեղել է քամին, այսինքն՝ կյանքի հաճույքները. այդ մարդն արդեն շեղված է, հոգեպես մեռած եւ նյութին գերված:

Այն մոմը, որը վառվում է, բայց՝ խոնարհված, այն մարդն է, որը հասցրել է իր մեղքերը խոստովանել եւ հասկացել է, որ առանց փողի կարող է ապրել, բայց առանց հոգու՝ անկարելի է: Նա թեկուզ գլխիկոր է ապրում, միեւնույնն է, իրեն արժանի է համարում մարդ կոչվելու:

Իսկ այն վերջինը, որը վառվում է մինչեւ վերջ, այն մարդն է, որի մեղքերը սակավ են: Այդ մարդը ամբողջ կյանքում գլուխը բարձր է քայլում եւ խոսելիս կարողանում է մարդկանց աչքերին նայել պարզ հայացքով՝ չնայած անցնում է ամեն ինչի միջով՝ ե՛ւ քամու, ե՛ւ այն ամենի, որ չկարողացա մեկ բառով ասել...

Ո՞վ հանգցրեց լույսը:
Եվ մի՞թե լույսը հանգչում է...

*Անի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (12 տ.)*
*Բ. Վաղարշապատ*

## «ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԻ» հարցը

**Ո՞վ կարող է լինել քո ընկերը. ի՞նչ է մտերմությունը:**
**Պատասխանել են Երեւանի Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 դպրոցի սաները:**

Իմ ընկերը կարող է լինել բարի, ազնիվ ու համարձակ մարդը: Մտերմությունն այն է, երբ այդ մարդուն վստահում եւ հարգում ես:

*Անի Ղազարյան (13 տ.)*

Իմ ընկերը կարող է լինել ամեն ոք, ով բարի է, անշահախնդիր եւ ընկերասեր: Իսկ մտերմությունն այն է, երբ կարող ես հանուն ընկերոջ մոռանալ քո անձնական շահը եւ նրան նվիրվել ամբողջովին:

*Սոսե Մարտիրոսյան (12 տ.)*

Իմ ընկերը կարող է լինել միայն այն անձնավորությունը, որին ես կվստահեմ լիովին: Ընկերության անելու համար մարդիկ պետք է իրար ճիշտ հասկանան, պատրաստ լինեն անհրաժեշտության դեպքում պաշտպանելու միմյանց:

Պետք է կուրորեն ընկերություն անել, այլ նկատելով մեկը մյուսի սխալներն ու սպասվելիք դժվարությունները՝ պետք է զգուշորեն ասել այդ մասին եւ ճիշտ խորհուրդ տալ միմյանց:

Մտերմությունը մարդկանց միջեւ ի հայտ է գալիս, երբ նրանք ունենում են միանման նպատակներ եւ նախասիրություններ: Այդ դեպքում մարդկանց միջեւ ստեղծվում է անտեսանելի նուրբ կապ. դա հենց հոգեկան մտերմությունն է:

*Գոհար Երիցյան (13 տ.)*

Էջի պատասխանատու՝ ԱՆՆԱ ԱԼԻՅԱՆ

